ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 614-Լ/2 «5» 09 2019 թ.

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԱՎԻԱՏՈՄՍԻ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԱՎԻԱՏՈՄՍԻ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԱՎԻԱՏՈՄՍԻ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի ԹԻՎ 40-Ա/1 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման շրջանակներում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի N 1-ի,

2) միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում ստանալու մասին դիմումի ձևը՝ համաձայն հավելվածի N 2-ի,

3) միջազգային միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին հաշվետվության ձևը՝ համաձայն հավելվածի N 3-ի,

4) միջազգային միջոցառումներին մասնակցության արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը՝ համաձայն հավելված N 4-ի:

5) միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու մասին պայմանագրի ձևը՝ համաձայն հավելված N 5-ի:

2 Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 2019 թվականի մարտի 4-ի թիվ 40-Ա/1 հրամանը:

3 .

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Գ.Լոռեցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Invalid signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված N 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի օգոստոսի –ի N հրամանի

# Կ Ա Ր Գ
# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԱՎԻԱՏՈՄՍԻ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) շրջանակներում ավիատոմսի ծախսի փոխհատուցում (այսուհետ՝ Փոխհատուցում) տրամադրելու պայմանները:

2. Միջոցառման շրջանակներում Փոխհատուցում կարող է տրամադրվել 16-ից մինչև 30 (ներառյալ) տարեկան երիտասարդի կամ 16-ից մինչև 30 (ներառյալ) տարեկան երիտասարդներից կազմված մինչև 5 հոգանոց խմբի անդամների (Այդ թվում Նախարարության կողմից ձևավորված պատվիրակության)՝ հետևյալ միջոցառումներին մասնակցելու համար՝

1) միջազգային երիտասարդական ծրագրեր՝ ֆորումներ, հանդիպումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, դասընթացներ (թրեյնինգ), համաժողովներ, գագաթաժողովներ, նիստեր,

2) միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, գիտական համաժողովներ, գիտական նստաշրջաններ,

3) միջազգային գիտատեխնիկական մրցույթներ,

4) միջազգային մշակութային մրցույթներ, փառատոներ, ցուցահանդեսներ,

5) միջազգային ինտելեկտուալ մրցույթներ,

6) միջազգային ստարտափ ծրագրեր:

3. Տվյալ եռամսյակի համար պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում Փոխհատուցում տրամադրելու առաջնահերթությունը սահմանվում է ըստ սույն կարգի 2-րդ կետում նշված 1-ից 6-րդ ենթակետերի հաջորդականության:

4. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված միջոցառումներին մասնակցելու նպատակով Փոխհատուցում ստանալու համար մասնակիցը մեկնելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ Նախարարություն է ներկայացնում հայտ՝ կազմված հետևյալ փաստաթղթերից՝

1) դիմում,

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

3) միջոցառմանը մասնակցելու պաշտոնական հրավերը (այսուհետ՝ Հրավեր),

4) Հրավերի հայերեն թարգմանությունը՝ հաստատված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից որակավորում ստացած թարգմանչի կողմից,

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերի փաթեթում պետք է առկա լինեն նաև հետևյալ հիմնավորումները.

1) Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջոցառումներին մասնակցության դեպքում՝

ա) Հրավերում պետք է հստակ նշված լինի Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն հասարակական կազմակերպության անվանումը, որը մասնակիցը ներկայացնելու է տվյալ միջոցառմանը,

բ) երաշխավորագիր՝ տրված տվյալ երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից:

2) Սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված միջոցառումների մասնակցության դեպքում՝

ա) Հրավերում պետք է հստակ նշված լինեն մասնակցի զեկուցման թեման, զեկուցման ձևը (գրավոր, բանավոր, աբստրակտ, ներկայացում (պրեզենտացիա)),

բ) զեկուցման ամփոփումը (ռեզյումե) կամ զեկուցման սեղմագիր տարբերակը:

3) Սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված միջոցառումներին մասնակցության դեպքում՝

ա) Հրավերում պետք է հստակ նշված լինի ներկայացվող աշխատանքի անվանումը,

բ) տվյալ աշխատանքի նկատմամբ հայտատուի հեղինակությունը հավաստող փաստաթուղթ(եր):

4) Սույն կարգի 2-րդ կետի 4-րդ ենթակետում նշված միջոցառումների մասնակցության դեպքում՝

ա) Հրավերում պետք է հստակ նշված լինի ներկայացվելիք կատարումը կամ ստեղծագործությունը,

բ) տվյալ ստեղծագործության լուսանկարը կամ կատարման տեսագրությունը կամ ձայնագրությունը:

5) Սույն կարգի 2-րդ կետի 5-րդ ենթակետում նշված միջոցառումներին մասնակցության դեպքում՝

ա) Հրավերում պետք է հստակ նշված լինի Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն կազմակերպության անվանումը, որը մասնակիցը ներկայացնելու է տվյալ միջոցառմանը,

բ) երաշխավորագիր՝ տրված տվյալ կազմակերպության կողմից:

6) Սույն կարգի 2-րդ կետի 6-րդ ենթակետում նշված միջոցառումներին մասնակցության դեպքում՝

ա) Հրավերում պետք է հստակ նշված լինի ստարտափ ներկայացնող խմբի կամ անհատի կամ կազմակերպության անվանումը,

բ) ստարտափի թեման,

գ) ստարտափի ամփոփ նկարագրությունը:

6. Նախարարության կողմից ձևավորված պատվիրակության անդամները ներկայացնում են միասնական հայտ՝ կազմված հետևյալ փաստաթղթերից՝

1) դիմում՝ պատվիրակության անդամների կողմից.
2) պատվիրակության անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.
3) միջոցառմանը պատվիրակության մասնակցության Հրավերը,
4) նախարարի հրամանը՝ պատվիրակություն ձևավորելու և պատվիրակության կազմը հաստատելու մասին:

7. Փոխհատուցում կարող է տրամադրվել միայն Հրավերում նշված միջոցառման սկզբից առավելագույնը 2 օր առաջ և ավարտից առավելագույնը 2 օր հետո ամսաթվերով, միայն էկոնոմ դասի ավիատոմսի դեպքում, ընդ որում, ավիատոմսը պետք է ձեռք բերված լինի էլեկտրոնային եղանակով՝ ավիափոխադրում իրականացնող կազմակերպության պաշտոնական կայքում հրապարակային օֆերտայով առաջարկվող ավիատոմսերից, իսկ դրա անհնարինության դեպքում անհրաժեշտ է իրականացնել գնանշման հարցում առնվազն 3 կազմակերպությունից և համապատասխան հիմքերը հաշվետվության հետ ներկայացնել Նախարարություն:

8. Փոխհատուցում տրամադրելու առաջնահերթությունը գործում է ըստ քննարկման պահին ստացված հայտերի:

9. Սույն կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետին համապատասխանող հայտերի դեպքում միևնույն օրը (օրերին) միևնույն միջոցառմանը նույն կազմակերպությունից մեկից ավելի հայտերի առկայության դեպքում Փոխհատուցում է տրվում միայն մեկ հայտատուի՝ բացառությամբ Նախարարության կողմից ձևավորված պատվիրակությունների:

10. Սույն կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետին համապատասխանող հայտերի դեպքում միևնույն օրը (օրերին) միևնույն միջոցառմանը նույն կազմակերպության մեկից ավելի ներկայացուցիչների կողմից ներկայացված հայտերի դեպքում Հանձնաժողովը գրավոր դիմում է վերոնշյալ կազմակերպության ղեկավարին՝ խնդրելով ընտրել Նախարարությանը դիմած հայտատուներից մեկին:

11. Միևնույն անձին նույն ֆինանսական տարվա ընթացքում մեկ անգամից ավել Փոխհատուցում չի տրամադրվում:

12. Միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին միջոցառումներին մասնակցելու հարցում ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու նպատակով սույն կարգի ընդունման պահից գործում է հայտերն ուսումնասիրող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում ի պաշտոնե ընդգրկված են.

1) նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետը կամ նրան փոխարինող անձը (այսուհետ՝ Հանձնաժողովի նախագահ),

2) նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետը կամ նրան փոխարինող անձը (այսուհետ՝ Հանձնաժողովի անդամ),

3) նախարարության իրավաբանական վարչության պետը կամ նրան փոխարինող անձը (այսուհետ՝ Հանձնաժողովի անդամ),

4) նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետը կամ նրան փոխարինող անձը (այսուհետ՝ Հանձնաժողովի անդամ),

5) նախարարության գնումների և հաշվապահական հաշվառման վարչության պետը կամ նրան փոխարինող անձը (այսուհետ՝ Հանձնաժողովի անդամ),

6) նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետը կամ նրան փոխարինող անձը (այսուհետ՝ Հանձնաժողովի անդամ),

7) նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության ծրագրերի համագործակցության և վերլուծությունների բաժնի պետը կամ նրան փոխարինող անձը (այսուհետ՝ Հանձնաժողովի անդամ),

13. Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները վերապահված է երիտասարդական քաղաքականության վարչության համագործակցության և վերլուծությունների բաժնի աշխատակիցներից մեկը՝ բաժնի պետի հանձնարարությամբ:

14. Հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության համար հրավիրում է հանձնաժողովի նիստ՝ մասնակցի մեկնելուց առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

15. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, երբ դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

16. Հանձնաժողովն ուսումնասիրում է հայտի համապատասխանությունը սույն կարգի պահանջներին և նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ ընդունում է որոշում՝ հայտը բավարարելու կամ մերժելու:

17. Հայտի մերժման հիմք կարող է հանդիսանալ.

1) Հայտը սույն կարգի պահանջներին չհամապատասխանելը,
2) Տվյալ եռամսյակի համար պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների անբավարարությունը:

18. Սույն կարգի 17-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում հանձնաժողովն իրավասու է հայտատուին տալ հայտը շտկելու մեկօրյա հնարավորություն:

19. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, ընդ որում, հայտը մերժելու դեպքում արձանագրության մեջ պետք է նշվեն մերժման հիմնավորումները:

20. Նախարարության երիտասարդական քաղաքականության վարչությունը մասնակցի մեկնելուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ Հանձնաժողովի որոշման մասին գրավոր տեղեկացնում է դիմումատուին:

21. Դիմումատուն ֆինանսական փոխհատուցման նպատակով Նախարարության հետ պայմանագիր կնքելու համար միջոցառումից վերադառնալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Նախարարություն է ներկայացնում ավիատոմսի ձեռքբերման էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը, վճարումը հավաստող փաստաթուղթը, նստեցման կտրոնը, էլեկտրոնային ավիատոմսը, անձնագրի պատճենը, միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին հաշվետվությունը, բանկային տվյալները:

22. Նախարարության երիտասարդական քաղաքականության վարչությունը սույն կարգի 21-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դրանք և տալիս է միջոցառմանը մասնակցելու արդյունքների վերաբերյալ եզրակացություն:

23. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությունը, ստանալով սույն կարգի 21-րդ կետում նշված փաստաթղթերը և միջոցառմանը մասնակցելու արդյունքների վերաբերյալ եզրակացությունը, 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դիմումատուի և Նախարարության միջև կնքվող ֆինանսական փոխհատուցում տրամադրելու մասին պայմանագրի կնքումը, ինչպես նաև ստորագրված պայմանագրի պատճենի, վճարումը հավաստող փաստաթղթերի, հաշվարկային փաստաթղթերի և վճարման հայտի տրամադրումը Նախարարության գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն:

24. Նախարարության գնումների և հաշվապահական հաշվառման վարչությունը, սույն կարգի 23-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց և ուսումնասիրելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով 2 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է համապատասխան վճարումները:

Հավելված N 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի օգոստոսի –ի N հրամանի

**ՁԵՎ**

ԴԻՄՈՒՄ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԱՎԻԱՏՈՄՍԻ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

**ՀՀ կրթության, գիտության,**
**մշակույթի և սպորտի նախարար**
**_____ ին**

1._____
_____
_____
_____ -ից

Դիմումատուի (խմբի կամ պատվիրակության դեպքում խմբի կամ պատվիրակության յուրաքանչյուր անդամի) անունը, հայրանունը, ազգանունը, մասնագիտությունը, զբաղեցրած պաշտոնը և/կամ ուսման վայրը, բնակության վայրը, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը՝ աշխատանքային, տան, բջջային

2._____
_____
_____
_____ -ից

3._____
_____
_____
_____ -ից

4._____
_____
_____
_____ -ից

5._____
_____
_____
_____ -ից

Ծանոթանալով միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու կարգին՝ խնդրում եմ Ձեզ տրամադրել ինքնաթիռի տոմսի փոխհատուցում:

Միջոցառման անվանումը ----------
---

Հրավիրող կազմակերպության անվանումը և կոնտակտները ----------
---
---

Միջոցառման անցկացման վայրը ----------

Միջոցառման սկիզբը և ավարտը ----------

Ուղևորության ուղղությունը (մեկնման և ժամանման քաղաքը) ----------
---

Նախարարության կողմից ավիատոմսի ծախսի փոխհատուցում ստանալու համար պարտավորվում եմ վերադարձից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել ավիատոմսի ձեռքբերման էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը, վճարումը հավաստող փաստաթուղթը, նստեցման կտրոնը, էլեկտրոնային ավիատոմսը, անձնագրի պատճենը, միջազգային միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին հաշվետվությունը և բանկային տվյալները, ինչպես նաև միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու կարգով պահանջվող այլ փաստաթղթերը:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը:

Դիմող՝ .....
անուն, ազգանուն, ստորագրություն

.....
անուն, ազգանուն, ստորագրություն

.....
անուն, ազգանուն, ստորագրություն

.....
անուն, ազգանուն, ստորագրություն

.....
անուն, ազգանուն, ստորագրություն

..... ..... 20 ..... թ.

Հավելված N 3
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի օգոստոսի –ի N հրամանի

**ՁԵՎ**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1._____
(անուն-ազգանունը)

2._____
(անուն-ազգանունը)

3._____
(անուն-ազգանունը)

4._____
(անուն-ազգանունը)

5._____
(անուն-ազգանունը)

1._____
(զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը և/կամ ուսման վայրը)

2._____
(զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը և/կամ ուսման վայրը)

3._____
(զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը և/կամ ուսման վայրը)

4._____
(զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը և/կամ ուսման վայրը)

5_____
(զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը և/կամ ուսման վայրը)

_____
(մեկնած երկիրը, մեկնելու և վերադարձի օրը, ամիսը, տարին)

_____
(ուղևորության նպատակը, միջոցառման անվանումը)

_____

_____
(ուղևորության արդյունքները՝ կցելով առնչվող նյութերը)

_____

_____

_____

_____

_____

(այլ տեղեկություններ)

_____

_____

Կից ներկայացնում եմ (ենք),

☐ ավիատոմսի ձեռքբերման էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը

☐ վճարումը հավաստող փաստաթուղթը

☐ էլեկտրոնային ավիատոմսը

☐ նստեցման կտրոնը

☐ անձնագրի պատճենը

☐ միջազգային միջոցառմանը մասնակցելու արդյունքների մասին հաշվետվությունը

☐ լուսանկար(ներ)

☐ տեսանյութ(եր)

☐ հավաստագիր

☐ մրցանակ

☐ վկայական

☐ պատվոգիր

☐ հրավիրող կողմից միջոցառման մասնակցությունը հավաստող փաստաթուղթ (տեղեկանք, նամակ)

այլ փաստաթղթեր (*նշել*) _____

_____

_____

| | |
|---|---|
| --- | --- |
| (անուն-ազգանունը) | (ստորագրությունը) |
| --- | --- |
| (անուն-ազգանունը) | (ստորագրությունը) |
| --- | --- |
| (անուն-ազգանունը) | (ստորագրությունը) |
| --- | --- |
| (անուն-ազգանունը) | (ստորագրությունը) |
| --- | --- |
| (անուն-ազգանունը) | (ստորագրությունը) |

..... ..... 20..... թ.

Հավելված N 4
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի օգոստոսի –ի N հրամանի

**ՁԵՎ**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Փոխհատուցում ստացողի անունը, հայրանունը, ազգանունը՝**

_____

**Նշումներ ներկայացված հաշվետվության վերաբերյալ.**

_____
_____
_____
_____
_____
_____
_____

**Նշումներ անհամապատասխանությունների մասին՝**

_____
_____

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ _____

(Փոխհատուցում ստացողի անունը, հայրանունը, ազգանունը)

Միջոցառմանը մասնակցելու արդյունքների վերաբերյալ տրվում է _____ եզրակացություն:
(դրական/բացասական)

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և**
**սպորտի նախարարության**
**երիտասարդական քաղաքականության վարչություն**

«____» «_____» 20__ թ.

..... ..... 20..... թ.

Հավելված N 5
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2019 թվականի օգոստոսի –ի N հրամանի

**ՁԵՎ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N**
**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԱՎԻԱՏՈՄՍԻ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան « ____ » _____ 20 . . թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի (ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա), մի կողմից և ..... (այսուհետ՝ Նվիրառու) (անձնագիր՝ .....տրված՝ ..... թ.-ին .....-ի կողմից) մյուս կողմից, հիմք ընդունելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի -ի թիվ հրամանով հաստատված դրույթները, ինչպես նաև միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ուղևորության հարցում փոխհատուցում տրամադրելու նպատակով հայտերն ուսումնասիրող հանձնաժողովի ..... թ.-ի .....-ին կայացած նիստի № ..... արձանագրության .....-ին կետը, «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշմամբ հաստատված «1115. Երիտասարդության Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով նախատեսվում է փոխհատուցում տրամադրել 20. . . թվականի .....-ը ..... քաղաքում ..... կազմակերպած «.....» ..... նպատակով 20..... թվականի .....-ը Երևան-.....-Երևան ինքնաթիռի տոմսի ծախսի՝ ..... (տառերով .....) ՀՀ դրամի (այսուհետ՝ Փոխհատուցվող գումար) համար:

## 2. ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ (ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ) ԿԱՐԳԸ

2.1 Փոխհատուցվող գումարի հանձնումը կատարվում է Նվիրառուին՝ Պայմանագրով նշված բանկային հաշվին՝ դրամական միջոցների փոխանցման միջոցով: Փոխհատուցվող գումարի փոխանցումը կատարվում է պայմանագրի կնքման պահից տասը աշխատանքային օրվա ընթացքում:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***3. 1. Նվիրատուն իրավունք ունի*** ՝

3.1.1 Նվիրառուից պահանջել հատուցելու Փոխհատուցվող գումարն ընդունելուց հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը:

3.1.2 Նվիրառուի կողմից ներկայացված հաշվետվության հետ կցվող անհրաժեշտ փաստաթղթերի իսկությունը չհամապատասխանելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

***3. 2. Նվիրատուն պարտավոր է՝***

3.1.3 Պայմանագրի 2.1 կետով սահմանված կարգով Նվիրառուին փոխանցել Պայմանագրի 1.1 կետով սահմանված Փոխհատուցվող գումարը:

***3. 3. Նվիրառուն իրավունք ունի՝***

3.1.4 Մինչև Փոխհատուցվող գումարն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այս դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

***3.4. Նվիրառուն պարտավոր է՝***

3.4.1 Ընդունել փոխհատուցվող գումարը:

3.4.2 Հատուցելու փոխհատուցվող գումարը փոխանցելուց հետո, դրա ընդունելուց հրաժարվելու հետևանքով Նվիրատուին պատճառված իրական վնասը:

## 4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Նվիրառուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի իսկություն համար:

4.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4.3 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

4.4 Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.5 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ՆՎԻՐԱՏՈՒ** | **ՆՎԻՐԱՌՈՒ** |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ ……<br>ՀՎՀՀ<br>…… | . . . . . .<br>Անուն, հայրանուն, ազգանուն<br>. . . . . .<br>բնակության վայրը/հաշվառման վայրը<br>. . . . . .<br>Անձնագրային տվյալները<br>Բանկ՝……<br>Հ/Հ……<br>Էլ.փոստ՝……<br>_____ |

Էլ. փոստ՝

……

Գլխավոր քարտուղար՝

_____

Կ. Տ.